



## ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՀԻՒՍԽԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՇԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԸ ՀԻՒԾՆԿԱԼԵՑ ՌԱԶՄԻԿ ՀԱՅԻԿԵԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՐԱՆԴԵՍԸ

Ազգային Առաջնորդարանը իր «Տիգրան Եւ Զարուհի Տեր Ղազարեան» սրահին ներս Ուրբաթ 16 Եւ Շաբաթ 17 Մայիսին հիւրընկալեց գեղանկարիչ Ռազմիկ Հաճիբեանի գործերուն ցուցահանդեսը:

Ցուցահանդեսը կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման յանձնախումբին կողմէ Եւ կը վայելէր Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրիսեանի հովանաւորութիւնը: Ներկայ էին հոգեւորականաց դասու, Ազգ. Վարչութեան անդամներ Եւ բազմատասնեակ արուեստաերներ:

Բացման խօսք արտասանեց կազմակերպիչ յանձնախումբի ատեսապետ Տիգրան Հրայր Ճերմակեան, որ հակիր կերպով ծանօթացուց Ռազմիկ Հաճիբեանի վաստակը:

Ողջոյնի ու օրինութեան խօսք արտասանեց Առաջնորդ Սրբազնը, որ վեր առաւ արուեստագետին հոգեկան հարստութիւնը Եւ որուն արտայայտութիւնն էն իր գեղանկարները, դրսեւորուած գոյներով ու ձեւերով, նաեւ խորհուրդներով: Աև նաեւ բարձր գևահատեց նորահաս սերունդին արուեստի զգայնութիւնը հաղորդելու Ռազմիկին աշխատանքը, որ կը կատարուի իր հաստատած արուեստանոցին միջոցով:

Խօսք առաւ նաեւ արուեստագետը, որ այս ցուցահանդեսի կազմակերպման համար շնորհակալութեան իր արտայայտութեանց կողքին, նշեց, որ արուեստը հոգիներ ազնուացնող ու վերացնող կալուած է, ինք այս մօտեցումով նուիրուած է անոր ու զայն ի սպաս կը դեն թէ՝ նոյնինքն Արուեստին Եւ թէ հայութիւնն ու Հայաստանը մարդկութեան ծանօթացնելու առաջադրանքին:

Այսուհետեւ, ներկաները առիթ ունեցան հաղորդակից դառնալու ցուցադրուած պաստառներու աշխարհին ու մտերմիկ զրոյց ունեցան արուեստագետին հետ:

## WESTERN PRELACY HOSTS ART EXHIBIT BY RAZMIK HAJIKIAN

The Western Prelacy hosted an exhibit of artist Razmik Samvelts Hajikian's works at the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall on Friday,

May 16<sup>th</sup>, and Saturday, May 17<sup>th</sup>. The exhibit was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and was organized by the Outreach Committee. Religious and Executive Council members were in attendance along with community members.

Welcoming remarks were offered by Outreach Committee Chair Mr. Herair Jermakian who gave a brief background of the artist. The Prelate conveyed his blessings to the artist during which he commended his artistry as well as his dedication to instructing our youth in the arts through his art studio.

Following Mr. Hajikian's remarks, in which he thanked the Prelacy for organizing the event, the exhibit was officially opened.